



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԸ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Կիրակի, Մարտ 28-ը, Ծաղկազարդ Է, տօնը Յիսուսի Քրիստոսի Երուսաղեմ յաղթական մուտքին:

Ծաղկազարդի տօնին առիթով, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագ պիտի մատուցուի եւ օրուան խորհուրդը պիտի փոխանցուի մեր հաւատացեալներուն:

Կիրակնօրեայի աշակերտներն ու մանուկները թափօր պիտի կազմեն. Ս. Պատարագի աւարտին, պիտի կատարուի դռնբացքի արարողութիւն:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցէ Էսսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ ու պիտի փոխանցէ իր պատգամը:

Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Ծաղկազարդի տօնին առթիւ, Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Մոնթեպելլոյի Սուրբ Խաչ Մայր Տաճարին մէջ:

Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Նորթ Հոլիվուտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ, պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ շրջանի հոգեւոր մատակարար Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, կ.ե. ժամը 2:00ին:

Իսկ Լաս Վեկասի Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Արժ. Տ. Աւետիս Քհլյ. Թորոսեան:

### **PRELATE TO CELEBRATE PALM SUNDAY AT HOLY MARTYRS CHURCH**

Sunday, March 28th, is Palm Sunday, the celebration of the triumphant entry of Our Lord Jesus Christ into Jerusalem.

Palm Sunday will be celebrated in all our churches with Divine Liturgy, the children's procession, and the opening of the portals service.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the Opening of the Portals service at Holy Martyrs Church in Encino.

By the ordinance of the Prelate, H.E. Archbishop Yeprem Tabakian will celebrate Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello, Very Rev. Fr. Muron Aznikian will be at the North Hollywood parish, Very Rev. Fr. Barthev Gulumian will be at St. Garabed Church in Hollywood. Rev. Fr. Avedis Torossian will celebrate Divine Liturgy at the Las Vegas parish where Holy Week services will this year take place for the first time.

\*\*\*

## **ԱՄԱԳ ՇԱՐԹՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ**

Ծաղկազարդի տօնէն մինչեւ Յարութեան տօնը երկարող ժամանակաշրջանը կը կոչուի Աւագ Շաբաթ:

Աւագ Շաբաթը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ ընդհանրապէս քրիստոնէայ հաւատացեալներուն համար ունի յատուկ նշանակութիւն, որովհետեւ այս ժամանակաշրջանը հարուստ է բազմաթիւ խորհուրդներով:

Շաբթուան իւրաքանչիւր օրը նուիրուած է աստուածաշնչական դրուագի մը, հետեւաբար, այդ դէպքին նուիրուած յատուկ արարողութիւններ տեղի կ'ունենան մեր եկեղեցիներուն մէջ:

Աւագ Շաբթուան ընթացքին, Առաջնորդ Սրբազանը պիտի այցելէ մեր Թեմի եկեղեցիները եւ պիտի ըլլայ մեր հաւատացեալ ժողովուրդին հետ:

Առաջնորդ Սրբազանին Աւագ շաբթուան ժամանակացոյցը հետեւեալն է.-

Աւագ Երեքշաբթի, 30 Մարտին, ժամը 7ին, Տասը Կուսանաց յիշատակի օրը, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ արարողութեան եւ պիտի տայ յաւուր պատշաճի քարոզ մը:

Աւագ Հինգշաբթի, 1 Ապրիլը կ'ընդգրկէ շարք մը խորհուրդներ. Վերջին Ընթրիքը, Ս. Հաղորդութեան հաստատման խորհուրդը, ոտնլուայ, ձերբակալութիւն Յիսուս Թրիստոսի, կարգ չարչարանաց եւ խաւարման գիշեր:

Առաջնորդ Սրբազան Հայրը, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի կատարէ ոտնլուայի արարողութիւնը, երեկոյեան ժամը 5ին, իսկ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ պիտի հանդիսապետէ Խաւարման Գիշերի արարողութեան, ժամը 7:30ին:

Աւագ Ուրբաթ, 2 Ապրիլը, յիշատակն է Յիսուս Թրիստոսի խաչելութեան եւ թաղման: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Օրէնճ Քաունթի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ արարողութեանց, ժամը 7ին:

Աւագ Շաբաթ, 3 Ապրիլը, Ս. Յարութեան տօնի ճրագալոյցն է: Առաջնորդ Սրբազան հայրը պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ, ժամը 4:30ին:

Կիրակի, 4 Ապրիլը, Սուրբ Յարութեան Տօնն է, Սուրբ Չատիկ: Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ պիտի մատուցէ Կլենտէյլի Ս.

Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւ Ս . Չատկուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ: Արարողութիւնը կը սկսի ժամը 10:30ին:

Աւագ Շաբթուան մեր ժամանակացոյցի մանրամասնութիւններուն կարելի է ծանօթանալ, այցելելով Ազգ. Առաջնորդարանի կայքէջը՝ [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)

## PRELATE'S HOLY WEEK SCHEDULE

Monday, March 29th, is the start of Holy Week. Throughout the week the Prelate will conduct services in various Prelacy Churches. Below is the Prelate's Holy Week schedule.

Holy Tuesday - Remembrance of the Ten Virgins  
St. Sarkis Church, Pasadena - 7 p.m.

Maundy Thursday  
Washing of the Feet - St. Mary's Church, Glendale - 5 p.m.  
Vigil - Holy Martyrs Church, Encino - 7:30 p.m.

Good Friday - Crucifixion and Burial  
Forty Martyrs Church, Orange County - 7 p.m.

Easter Eve - Lighting of Candles (*Jrakalooys*)  
St. Garabed Church, Hollywood - 4:30 p.m.

Easter - St. Mary's Church, Glendale - 10:30 a.m.

Please visit the Events section of our website ([www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)) for the complete Holy Week schedule.

\*\*\*

## ԱՐԵՎԱԳԱԼԻ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՅԱՆԴԻՍԱՊԵՏԵՅ Ս. ՆԱՅՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

40-օրեայ Մեծ Պահոց շրջանի վերջին Արեւագալի արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 24 Մարտին: Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ եւ հանդիսապետեց Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Արեւագալի արարողութեան եւ հաւատացեալներուն փոխանցեց իր պատգամը: Արարողութեան ներկայ էին Ազգ. Ֆերահեան վարժարանի աշակերտներ:

Արարողութենէն ետք, Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կազմակերպած ճաշի հանդիպումին: Ներկայ էին նաեւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Խաչիկ Երեցեան, վարժարանին

տնօրենը՝ Տիար Ժան Քոսակեան եւ Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներ:



Այս առիթով խօսք առնելով, Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ մեծ պահոց խորհուրդին ու Աստուծոյ ընծայած բարիքներուն: Ան ընդգծեց, որ Երկնաւոր Հայրը մշտական ներկայութիւն է ու պէտք է ըլլայ մեր կեանքին մէջ, ըլլայ առաջնորդն ու հովանին մեր արարքներուն: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ

եկեղեցւոյ ծառայողներուն մասին, բարձր գնահատելով յատկապէս Տիկնանց Միութեան անդամները:

Յայտնենք նաեւ, որ Մեծ Պահոց շրջանի հսկման վերջին արարողութեան, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Փասատիւնայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, եւ այս առիթով իր հոգեւոր պատգամը պիտի փոխանցէ ներկայ հաւատացեալներուն:

## **PRELATE PRESIDES OVER LAST SUNRISE SERVICE OF LENT AT HOLY MARTYRS CHURCH**



The last Sunrise Service of Great Lent took place on the morning of Wednesday, March 24th, in all Prelacy churches.

The Prelate presided over the service at Holy Martyrs Church in Encino and delivered his message to the faithful in attendance, among them students of Ferrahian High School.

A luncheon organized by the parish Ladies Guild followed at "Dikranian" Hall.

Among the guests in attendance were Executive Council member Mr. Khatchig Yeretian, Ferrahian school Principal John Kossakian, and parish Board of Trustees members.

The Prelate delivered his message on this occasion, speaking on the deep meaning of Great Lent and emphasizing how our Heavenly Father must remain a constant presence in our lives and the guiding force of our actions. The Prelate concluded by commending all the church volunteers for their dedicated service.

On Friday, March 26th, the Prelate will preside over the last vigil service at St. Sarkis Church in Pasadena.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ «ԱՍՊԱՐԷՉ»-«ՀՈՐԻԶՈՆ»Ի ՆՈՐ ՇԵՆՔԻՆ ԲԱՑՈՒՄԸ**

Կիրակի, 21 Մարտի յետմիջօրէին, կատարուեցաւ «Ասպարէզ»-  
«Հորիզոն» նոր շէնքին պաշտօնական բացումը:



Առաջնորդ Սրբազան  
Յայրը ներկայ եղաւ  
հանդիսութեան, փոխանցեց  
իր օրհնութիւնները: Ան  
շէնքի մուտքին կատարեց  
աղ ու հացի օրհնութիւնը եւ  
շէնքին ու գրասենեակներու  
բացումը:

## **PRELATE CONDUCTS BLESSING AND OPENING OF ASBAREZ HORIZON NEW HEADQUARTERS**

The official opening of the Asbarez-Horizon new headquarters located in Little Armenia took place on the afternoon of March 21st.

The Prelate conveyed his message on this occasion, after which he conducted the blessing of the building and offices.

\*\*\*